

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1914-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*«Վավերացնում եմ»  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան*

5 սեպտեմբերի 2005 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 օգոստոսի 2005 թվականի N 1353-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-  
Ի N 1914-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Առանձին մասնագիտությունների գծով ուստիկանությունում ծառայության անցնելու մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված առավելագույն տարիքային սահմանափակումները սահմանելու մասին» N 1914-Ն որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁԻՆ  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ  
ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Ուստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Սահմանել ուստիկանությունում ծառայության անցնելու համար առանձին մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված առավելագույն տարիքային սահմանափակումները՝ համաձայն հավելվածի:

Ց Ա Ն Կ

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁԻՆ  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ  
ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

Ոստիկանությունում ծառայության անցնելու համար առավելագույն տարիքային սահմանափակումներ պահանջող մասնագիտություններն են՝

Մասնագիտությունը

Առավելագույն տարիքային սահմանափակումը

1. Բուժական գործ, բժշկական խարզելման գործ, ստոմատոլոգիա, դեղագործություն (բժիշկներ, ոստիկանության բժշկական հաստատության բժշկական անձնակազմ)

մինչև 42 տարեկան

2. Ոստիկանության ուսումնական հաստատության ուսումնական պլանով նախատեսված առարկաների ցանկում ընդգրկված մասնագիտություններ (ոստիկանության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմ)

մինչև 42 տարեկան

3. Ֆինանսներ և վարկ, հաշվապահական հաշվառում և աուդիտ, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (ֆինանսական ծառայության աուդիտ, հաշվապահություն)

մինչև 42 տարեկան

4. Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, տեղեկատվության պաշտպանության կազմակերպում և տեխնոլոգիա, տեղեկատվական (ինֆորմացիոն) համակարգեր, հաշվողական մեքենաներ, համալիրներ և ցանցեր, էլեկտրոնային հաշվողական միջոցների կառուցավորում (կոնստրուկտավորում) և տեխնոլոգիա (ոստիկանության տեղեկատվական կենտրոնի ծրագրավորման, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների, ինֆորմացիոն համակարգերի շահագործման բաժնի պետ, պետի տեղակալ, բաժանմունքի պետ, ավագ ինժեներ-ծրագրավորող, ավագ ինժեներ-սիստեմատեխնիկ, ինժեներ-ծրագրավորող, ինժեներ-սիստեմատեխնիկ)

մինչև 42 տարեկան

5.Տրանսպորտային և տեխնոլոգիական մեքենաների ու սարքավորումների տեխնիկական սպասարկում ու շահագործում, տրանսպորտում փոխադրումների կազմակերպում և կառավարում (ոստիկանության փորձագիտական ծառայության ավտոտեխնիկական հետազոտությունների փորձագետ)

մինչև 42 տարեկան

6.Ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձագիտություն, տնտեսագիտություն, քիմիա (ոստիկանության փորձագիտական ծառայության ապրանքագիտական և տեխնոլոգիական հետազոտությունների փորձագետ)

մինչև 42 տարեկան

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

2005 թ. օգոստոսի 30 Երևան